ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին

Սույն հայտարարությունը հրապարակվում է «29» մարտի 2024թ.-ին:

ՀՀ կենտրոնական բանկը ստորև ներկայացնում է «**ՀՀ կենտրոնական բանկում շահագործվող HCL ծրագրային ապահովման արտոնագրերի բաժանորդագրության և ուղեկցման ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպության ընտրության CBA-2024-003 ծածկագրով հրապարակային մրցույթի**» ընթացակարգին ներկայացված հայտի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների, անգործության ժամկետի և շահերի բախման վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

Հրապարակային մրցույթին մասնակցել է հետևյալ կազմակերպությունը՝

1. **«ԼանԱր Սերվիս» ՍՊԸ**

Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխան՝ ստուգվել են հայտով ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև մասնակցի ներկայացրած գնման առարկայի բնութագրերի համապատասխանությունը օրենքով և հրավերով սահմանված պահանջներին, գնահատվել են մասնակցության իրավունքը և որակավորման չափանիշները:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի «28» մարտի 2024թ. նիստի ընթացքում ամփոփվել է վերը նշված հրապարակային մրցույթի արդյունքները: Հաղթող մասնակից է ճանաչվել **«ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ն:**

Սույն ընթացակարգի դեպքում անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սույն ընթացակարգի շրջանակում շահերի բախում չի հայտնաբերվել:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի քարտուղար
Սիրան Եգանյան

Պատվիրատու՝ ՀՀ կենտրոնական բանկ